

Սուչավա էր, Լեմպերկ կոչուեցաւ, նոյն տեղւոյ արեւելեան հայ եպիսկոպոսական աթոռը նըստելու, վասն զի Լեմպերկի Բարսումաս (Պարսամ) Պոկտանովիչ աթոռէն հրաժարած էր⁹⁷։ Բարսումաս Պոկտանովիչ անոր համար աթոռէն հրաժարիլ ուզեց — կամ աւելի՛ Լեհացմէ առ այն ստիպեցաւ, — վասն զի Լեհաց բաղձանաց համեմատ՝ հին արեւելեան հաւատքին յամառութեամբ յարեալ Լեհահայերն⁹⁸ կաթողիկէականութեան դարձընել թէեւ աշխատեցաւ, բայց իւր երեքամեայ եպիսկոպոսութեան ժամանակ (1579—1582)⁹⁹ չկրցաւ յաջողընել¹⁰⁰։

Աղմկալի առններն մեզ արդէն ծանօթ Տրական Տանովաքն Սուչավայէն Լեհաստան փախաւ, եւ այնուհետեւ Լեմպերկ իւր բնակութիւնն հաստատեց, որով Մոլտաւիոյ իշխաններն անոր ի մասնաւորի իցքանիի քով ունեցած ամէն կալուածներն, ուր այսօրս Ս. Աստուածածնի որթողոքս եկեղեցին կայ, իբրեւ անտէր ստացուածք յարքունիս գրաւեցին։ Սակայն Տրականի մահուանէն ետեւ՝ իւր որդին Պոկտան մէջտեղ ելաւ եւ Երեմիա Մովիլա իշխանին առջեւ դատ բացաւ եւ ետ պահանջեց իւր հայրենի ստացուածքն, որուն իբրեւ վկայ կոչեց ծերունի Ռումանիացիներ եւ Հայեր, որով յիշեալ իշխանն յամին 1597 Յունր. 22ին տուած վաւերագրով հայրենի ստացուածքն անոր ետ տուաւ եւ նոյնն հաստատեց¹⁰¹։

Հայք արեւելքի վաճառաց փոխադրութեան շատ շահաբեր գործոյն պարապելով՝